ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կորպորատիվ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքների վերաբերյալ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 22.02.2017թ.-ին «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ-ի առաջնային տեղաբաշխման հարթակում տեղի է ունեցել ՖԻՆՔԱ ՈՒՎԿ ՓԲԸ-ի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերի տեղաբաշխում՝ ստանդարտ փակ (եվրոպական) աճուրդի միջոցով: Նշենք նաև, որ որպես տեղաբաշխող հանդես է եկել ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն, որն իրականացրել է երաշխավորված տեղաբաշխում: Տեղաբաշխման արդյունքները հետևյալն են.

Պարտատոմսերի տեսակը՝	Անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային ոչ փաստաթղթային, առանց ապահովվածության
Պարտատոմսի միջազգային տարբերակիչ ծածկագիր (ԱՄՏԾ)՝	AMFNCAB21ER4
Թողարկման ամսաթիվ (օր/ամիս/տարի)՝	22/02/2017թ.
Տեղաբաշխման ամսաթիվ (օր/ամիս/տարի)՝	22/02/2017թ.
Մարման ամսաթիվ (օր/ամիս/տարի)՝	22/02/2019թ. Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը, եթե մարման օրը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրը:
Թողարկման ծավալ (ԱՄՆ դոլար)՝	4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխման ծավալ (ԱՄՆ դոլար)՝	4,000,000 (չորս միլիոն) ԱՄՆ դոլար
Քանակը՝	160,000 (մեկ հարյուր վաթսուն հազար) հատ
Ներկայացված գնման հայտերի ընդհանուր ծավալ (ԱՄՆ դոլար)՝	4 209 069 (չորս միլիոն երկու հարյուր ինը հազար վաթսունինը) ԱՄՆ դոլար
Բավարարված գնման հայտերի ընդհանուր ծավալ (ԱՄՆդոլար)՝	4 003 869 (չորս միլիոն երեք հազար ութ հարյուր վաթսունինը) ԱՄՆ դոլար

Աճուրդի մասնակիցների քանակ՝	5
Պահանջարկը տեղաբաշխված ծավալի համեմատ՝	105%
Տեղաբաշխված պարտատոմսերի կտրման նվազագույն գինը՝	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Տեղաբաշխված պարտատոմսերի կտրման եկամտաբերությունը՝	7.5%
Տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը՝	7.447%
Մեկ պարտատոմսի անվանական արժեքը (ԱՄՆ դոլար)՝	25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար
Տարեկան արժեկտրոնային եկամտաբերությունը՝	7.5% (յոթ ամբողջ հինգ տասնորդական) տոկոս
Արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝	կիսամյակային
Արժեկտրոնի վճարման օրերը (օր/ամիս/տարի)՝	22.08.2017թ., 22.02.2018թ., 22.08.2018թ., 22.02.2019թ. Արժեկտրոնի վճարումները կատարվում են արժեկտրոնի հաշվարկման օրերին, եթե վճարման օրը հանդիսանում է ոչ աշխատանքային օր, ապա վճարումն իրականացվում է տվյալ օրվան հաջորդող աշխատանքային օրը: